

- 14 Ի սուրբ Մարիամ որ Եգիպտացոց
Ձեռնադրէր ապա զմանս ի Հայոց,
Որք ուսեալ էին գիտութիւն գրբոց
Ի փրօփականտայ անուանեալ դպրոց:
- 15 Յորոց եւ մինն էր Յօհան Գասպասեան,
Որ լեալ Մէրտինու իմ Միջագիտաց
Արքեպիսկոպոս ժիր ուղղափառաց
Նընջեաց ի Հռոմ յետ ժամանակաց:
- 16 Այլ յետ ամսոց ինչ անտի նա անդէն
Դառնայր ուղղակի ի վէնէտկոյ շէն,
Զի որոշեալն էր բնակիլ անդէն
Գրեամբք պարապիլ կեալ առանձնօրէն: 1747
- 17 Եւ քանզի Սարգիս միշտ եւ հանապազ
Ծառայել Ազգին չէր բընաւ նիազ,
Վասն այն որոնէր անդ իսկ ըզտարազ
Օգտել այնմ յիր ինչ թէ եւ յոյժ նրուազ:
- 18 Այլ նախ հաստել անդ դրպրոց ինչ խոկայր,
Յոր զաշխարհական հայ մանկանց գումար
Յուղղափառ հաւատ ի բարս, վարս ճարտար
Յաղատ արուեստ ինչ մարդել ըղձանայր:
- 19 Որոց յեղրելն անդ վարժումն եւ զիմաստ,
Յաշխարհ հայրենի դարձեալ գէտ ըզգաստ
Յօգեսցին Ազգիս յայլ ոստ զերթ պատուաստ
Յառնել լաւ պտուղ եղիցին պատրաստ:
- 20 Քանզի խորհէր նա՝ թէ այր աշխարհիկ
Կըրթեալ ի հաւատ ուսեալ սակաւիկ,
Մուծեալ յազգայինս յաշխարհ իւր բընիկ
Զիւրայնոց ըզկամս շահէր գիւր, լըռիկ: